ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

N 13

«05» փետրվարի - 2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 30-ին կայացած թիվ 1 նիստի որոշումները:

Առդիր «13» թերթ:

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.61/1240-15
«05» 02 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 1-Ա

«30» հունվարի - 2015թ. թիվ 1 նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 1 նիստի օրակարգը` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ---------------- | ---------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ` ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015 թվականի հունվարի «30»
գ. Լուսագյուղ
Ժամը` $11^{00}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի հունվարի 30-ի թիվ
1 նիստի N 1-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 1 նիստի օրակարգը հաստատելու մասին.

2/ 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին.

3 / Համայնքի ավագանու 2015 թվականի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին.

4/ Կենցաղային աղբի հավաքման և տեղափոխման նպատակով գումար հատկացնելու մասին.

5/ Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

6/ «Լուսագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին դրամաշնորհ հատկացնելու մասին.

7/ Համայնքի մահացած բնակիչների ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 2-Ն

«30» հունվարի - 2015թ. թիվ 1 նիստ

## 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի զեկույցը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ---------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015 թվականի հունվարի «30»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 $^{30}$

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30 -Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ N-2-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

## ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

/հազար դրամ/

| Հ/Հ | Եկամուտների անվանումը | 2013թ պլան | 2013թ փաստ | 2014թ պլան | 2014թ փաստ | 2013թ կատարման % | 2014թ կատարման % |
|---|---|---|---|---|---|---|---|
| I | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ-ԸՆԴԱՄԵՆԸ | **19557.9** | **19966.4** | **22564.2** | **23270.1** | **100.9** | **103.1** |
| 1. | **Սեփական եկամուտներ** | **5211.3** | **5619.8** | **5405.2** | **6111.1** | **103.0** | **113.0** |
| 1.1 | Հողի հարկ | 3600.0 | 3617.5 | 3600.0 | 3601.4 | 100.4 | 100.0 |
| 1.2 | Գույքահարկ շենքերի | 350.0 | 403.0 | 365.0 | 398.5 | 107.5 | 109.2 |
| 1.3 | Գույքահարկ փոխադրամիջ. | 751.3 | 1065.6 | 930.2 | 1569.4 | 101.0 | 168.7 |
| 1.4 | Վարձակալական հողի հարկ | 300.0 | 300.7 | 300.0 | 301.8 | 100.6 | 100.6 |
| 1.5 | Տեղական տուրք | 210.0 | 210.0 | 210.0 | 210.0 | 100.0 | 100.0 |
| 1.6 | Այլ ոչ հարկային եկամուտ | | 23.0 | | 30.0 | | |
| 2 | Պաշտոնական դրամաշնորհներ | 14346.6 | 14346.6 | 17159.0 | 17159.0 | 100.0 | 100.0 |
| 2.1 | Պետ. բյուջ. դոտացիա | 14141.2 | 14141.2 | 17142.2 | 17142.2 | 100.0 | 100.0 |
| 2.2 | Պետ. բյուջ. համ. վարչ. բյուջ.տրամ.նպատակային հատկացում | 205.4 | 205.4 | 16.8 | 16.8 | 100.0 | 100.0 |
| II | **ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ-ԸՆԴԱՄԵՆԸ** | **16541.5** | **16541.5** | **13764.3** | **13764.3** | **100.0** | **100.0** |
| 1 | Գույքի, հողի իրացումից մուտքեր | 558.2 | 558.2 | | | 100.0 | |
| 2 | Պետ. բյուջ. կապիտալ ծախսերի նպատակային հատկացում | 10000.0 | 10000.0 | | | 100.0 | |
| 3 | Տարեսկզբի մնացորդը | 5983.3 | 5983.3 | 13764.3 | 13764.3 | 100.0 | 100.0 |
| I+II | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | **36099.4** | **36507.9** | **36328.5** | **37034.4** | **101.1** | **101.9** |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

/հազար դրամ/

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | 2013թ պլան | 2013թ փաստ | 2014թ պլան | 2014թ փաստ | 2013թ կատարման % | 2014թ կատարման % |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | **36099.4** | **22743.6** | **36328.5** | **25457.7** | **70.1** | **63.0** |
| 1 | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **16670.6** | **12299.2** | **18304.8** | **14327.8** | **73.8** | **78.3** |
| 1.1 | Տեղական ինքնակառավարում | 15920.6 | 11585.2 | 16624.8 | 12677.8 | 72.8 | 76.2 |
| 1.2 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 750.0 | 714.0 | 1680.0 | 1650.0 | 95.2 | 98.2 |
| 2 | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **0.0** | 0.0 | **950.0** | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2.1 | Տնտեսական հարաբերություն | 0.0 | 0.0 | 950.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3 | **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | **960.0** | **960.0** | **960.0** | **960.0** | **100.0** | **100.0** |
| 3.1 | ԱՂԲԱՀԱՆՈՒՄ | 960.0 | 960.0 | 960.0 | 960.0 | 100.0 | 100.0 |
| 4 | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | **800.0** | **799.8** | **700.0** | **667.0** | **100.0** | **95.3** |
| 4.1 | Ջրամատակարարում | 800.0 | 799.8 | 700.0 | 667.0 | 100.0 | 95.3 |
| 5 | **ՀԱՆԳԻՍՏ ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ** | **3050.0** | **620.0** | **2525.0** | **1424.5** | **20.3** | **56.4** |
| 5.1 | Գրադարաններ | 200.0 | 0.0 | 695.0 | 694.5 | 0.0 | 99.9 |
| 5.2 | Մշակույթի տներ, ակումբներ | 2000.0 | 0.0 | 950.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5.3 | Այլ մշակութային կազմակերպություններ | 850.0 | 620.0 | 880.0 | 730.0 | 72.9 | 82.9 |
| 6 | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | **11165.5** | **6304.6** | **8874.9** | **5728.4** | **56.5** | **64.5** |
| 6.1 | Նախադպրոցական կրթություն | 10645.0 | 5784.1 | 8324.9 | 5178.4 | 54.3 | 62.2 |
| 6.2 | Միջնակարգ ընդh. կրթություն | 520.5 | 520.5 | 550.0 | 550.0 | 100.0 | 100.0 |
| 7 | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | **1950.0** | **1760.0** | **2400.0** | **2350.0** | **90.2** | **97.9** |
| 7.1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 1950.0 | 1760.0 | 2400.0 | 2350.0 | 90.2 | 97.9 |
| 8 | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** | **1503.3** | **0.0** | **1613.8** | 0.0 | 0.0 | 0.0 |
| 8.1 | Համայնքի պահուստային ֆոնդ | 1503.3 | 0.0 | 1613.8 | 0.0 | 0.0 | 0.0 |

**Սեփական եկամուտները** 2014թ. հաստատվել են 5405.2 հազ. դրամ, կատարվել է 6111.1 հազ. դրամ կամ 113.0 %:

**Սեփական եկամուտները** 2013թ. հաստատվել են 5211.3 հազ. դրամ, կատարվել է 5619.8 հազ. դրամ կամ 107.8 %:

2014թվականին սեփական եկամուտների պլանը 2013թվականի. համեմատությամբ ավելացել է 193.9 հազ. դրամով, փաստացի կատարումը` 491.3 հազ. դրամով կամ 5.2 %-ով:

2014թ հողի հարկի փաստացի եկամուտը 2013թ. համեմատությամբ պակասել է 16.1 հազ.դրամով, գույքահարկի գծով եկամուտը ավելացել է 499.3հազ.դրամով: 2013 և 2014թթ վարձակալական հողի հարկի փաստացի եկամուտը և տեղական տուրքն ունեն նույն ցուցանիշները:
Դոտացիայի գումարը ավելացել է 3001.0 հազ.դրամով:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ հողի հարկի ապառքը կազմել է 4223.2 հազ. դրամ, իսկ գույքահարկի ապառքը` 1464.5 հազ.դրամ:

Վարչական բյուջեի մնացորդը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 3661,4 հազ.դրամ,իսկ ֆոնդային բյուջեի մնացորդը` 7915.4 հազ.դրամ:

**2014թվականին կատարվել են հետևյալ ծախսերը (ընդամենը 25457.7 հազ.դրամ):**

Տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար կատարվել է ընդամենը` 12677.8 հազ.դրամ ծախս, որից`

1. աշխատավարձ 9483.6 հազ. դրամ,
2. կապի ծառայություն 107.0 հազ. դրամ,
3. գրասենյակային նյութեր 120.6 հազ. դրամ,
4. ներքին գործուղում և ծառ. ուղևորութ. 101.1 հազ. դրամ,
5. էլեկտրաէներգիա 545.2 հազ. դրամ,
6. տրանսպորտային նյութեր 480.0 հազ. դրամ,
7. համակարգչային ծառայություն 58,8 հազ. դրամ,
8. ընդհանուր բնույթի ծառայ. 230.0 հազ. դրամ,
9. մեք. և սարքավորումների ընթ.նորոգում` 227.5 հազ. դրամ,

10. տեղեկատվական ծառայություններ 60.0 հազ. դրամ,

11. պարտադիր վճարներ` 88.0 հազ.դրամ,

12. վարչական սարքավորումներ` 110.5 հազ.դրամ,

13. շենք. և կառույց. ընթացիկ նորոգում` 132.5 հազ.դրամ,

14. մասնագիտական ծառայություններ` 500.0 հազ.դրամ,

15. հատուկ նպատակային այլ նյութեր` 47.0 հազ.դրամ,

16. կենցաղային նյութեր` 47.0 հազ.դրամ,

17. ապահովագրական ծախսեր` 39.0 հազ.դրամ,

18. պարգևատրություն 300.0 հազ.դրամ:

Սոց. ապահովագրության ծրագրերով տրվել են ֆինանսական օգնություն համայնքի նյութապես վատ վիճակում գտնվող երեսունինը բնակիչների, այդ թվում` զոհված ազատամարտիկի ծնողի, Արցախյան պատերազմի հաշմանդամի ծնողի, համայնքի մահացած բնակիչների ընտանիքների անդամներին, ընդամենը` 2200.0 հազ.դրամ:

Նվիրատվություն կատարելու համար ծախսվել է 150.0 հազ. դրամ:

Աղբահանության աշխատանքների կատարման համար 2014թ. ծախսվել է 960.0 հազ. դրամ:

Գրադարանային ծառայության համար ծախսվել 694.5 հազ.դրամ:

Մայիսի 9-ի տոնի առթիվ միջոցառում կազմակերպելու համար ծախսվել է 250,0 հազ. դրամ:

«Լուսագյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ին տրվել է դրամաշնորհ 410.0 հազ. դրամ` նախադպրոցական կրթության ծրագրով դաստիարակի աշխատավարձը վճարելու համար և 550.0 հազ.դրամ` դպրոցի շենքի վերանորոգման համար:

Մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգման 2-րդ փուլի աշխատանքների համար ծախսվել է 4768.4 հազ.դրամ:

Համայնքի փողոցների խմելու ջրագծերի ընթացիկ նորոգման աշխատանքների համար ծախսվել է 667.0 հազ. դրամ:

Համայնքի ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքների համար ծախսվել է 680.0 հազ. դրամ:

Գիտելիքի, գրի և դպրության օրվա առթիվ համայնքի դպրոցի **առաջին դասարանցիներին**, Նոր տարվա միջոցառման առթիվ **առաջինից չորրորդ դասարանի աշակերտներին և մինչև հինգ տարեկան երեխաներին** նվերներ գնելու համար ծախսվել է 480.0 հազ.դրամ:

1915թ. Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքար ձեռք բերելու նպատակով ծախսվել է 970.0 հազ.դրամ:

2014 թ. ընթացքում գյուղապետարան մուտք է եղել 161, ելք` 155 փաստաթուղթ:
Հրավիրվել և անցկացվել է ավագանու 13 նիստ:
Ընդունվել է գյուղապետի 40 որոշում և արձակվել` 8 կարգադրություն:
Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 37 հրաման:
Քաղաքացիներին տրվել է 299 տեղեկանք:
Կազմվել և վավերացվել է 2 կտակ:

Չնայած կատարված աշխատանքներին համայնքում չլուծված գերկարևորագույն խնդիրներից է մնացել .

1. նոր դպրոցի կառուցումը ,
2. ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցումը,
3. մանկապարտեզի համար գույքի ձեռք բերումը,
4. կենտրոնական ճանապարհի կապիտալ նորոգումը` 550 գծ.մ. երկարությամբ:

Լուսաղբյուրի գյուղապետ` Ս. Կարապետյան

Աշխատակազմի քարտուղար` Մ. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ 3-Ա

«30» հունվարի 2015թ. թիվ 1 նիստ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ավագանու կանոնակարգը.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| Գ. Սարգսյան | ------------------ | ------------------ | ------------------ |
| Խ.Տերտերյան | ------------------ | ------------------ | ------------------ |

ԼՈւՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015 թվականի հունվարի «30»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $12^{00}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի հունվարի 30-ի
թիվ 1 նիստի N 3-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ

1/ հունվարի 30

2/ մարտի 31

3/ մայիսի 29

4/ հուլիսի 31

5/ սեպտեմբերի 30

6/ նոյեմբերի 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4-Ա

«30» հունվարի - 2015թ. թիվ 1 նիստ

## ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով հաստատված «Աղբահանում» 0511 ծրագրի «Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածից 960 000 /ինը հարյուր վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել համայնքի բնակեցված փողոցներից կենցաղային աղբի հավաքման և տեղափոխման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Ա Գրիգորյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ---------------- | ---------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015 թվականի հունվարի «30»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 $^{30}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ 5-Ա

«30» հունվարի - 2015թ. թիվ 1 նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2015 թվականի հունվարի 29-ի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ---------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015 թվականի հունվարի «30»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13 00

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 6-Ա

«30» հունվարի 2015թ. թիվ 1 նիստ

## «ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով հաստատված «Նախադպրոցական կրթություն» 0911 ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածից «Լուսագյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ին հատկացնել 240 000 /երկու հարյուր քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ ընթացիկ սուբվենցիա դաստիարակի հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների աշխատավարձերը վճարելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ------------------- | -------------------- | --------------- |
| Գ. Սարգսյան | ------------------- | -------------------- | --------------- |
| Խ.Տերտերյան | ------------------- | -------------------- | --------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ --------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015 թվականի հունվարի «30»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13 [30]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7-Ա

«30» հունվարի 2015թ. թիվ 1 նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի մահացած բնակիչների ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ յուրաքանչյուրին 40000 /քառասուն հազար/ ական դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | ---------------------- | ---------------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ---------------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2015 թվականի հունվարի «30»

գ. Լուսագյուղ

Ժամը՝ $14^{00}$